ՀՏԴ : 929:902(479.25) Քալանթար+39
Doi:10.54503/0135-0536-2023.1-183

# ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1930-ական թվականներ)*

ԿԱՐԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ

**Բանալի բառեր՝ Աշխարհբեկ Քալանթար, Խորհրդային Հայաստան, սոցիալիստական շինարարություն, Հնությունների պահպանության կոմիտե, հուշարձանների պահպանություն, դիմակայություն, հետազոտություն, լուսաբանում:**

**Նախաբան**

*1930-ական թվականները քաղաքական, տնտեսական և մշակութային տեսակետից հարուստ ժամանակաշրջան էր խորհրդային պետության պատմության մեջ: Երկրում ողջ թափով ընթանում էին առաջին հնգամյա պլանի կատարման աշխատանքները: Խորհրդային Հայաստանում աննախընթաց վերելք էր ապրում սոցիալիստական շինարարությունը. կառուցվում էին գործարաններ, շարք էին մտնում նոր հիդրոէլեկտրակայաններ և այլն: Բնականաբար, այդ ամենը, անշուշտ, ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ էր թողնում մշակութային կյանքի վրա: Դրականն այն էր, որ գնալով ավելանում էին ժողովրդական կրթությանը և մշակույթի զարգացմանը հատկացվող միջոցները, տարեցտարի ամրանում էր տեխնիկական բազան: Մյուս կողմից, սակայն, սոցիալիստական շինարարության աննախադեպ ծավալումը նոր խնդիրներ էր առաջացնում հանրապետությունում մշակութային արժեք ներկայացնող հնավայրերի և ճարտարապետական կառույցների համար: Այդ տեսակետից Հնությունների պահպանության կոմիտեի[1] աշխատանքները ոչ միայն չպակասեցին, այլև ամենօրյա հետևողական աշխատանքի նոր ճակատ էր բացվում: Այդ մասին են վկայում Հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարի (1884–1942)[2] այդ տարի-*

---

** Ներկայացվել է 28. II. 2023 թ.: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի հայցորդ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Գագիկ Սարգսյանը (03. III. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

*[1] Հնությունների պահպանության կոմիտեն ստեղծվել է 1923 թ. դեկտեմբերի 30-ին ՀՍԽՀ լուսժողկոմի 107 հրամանով: Կոմիտեի նախագահ է հաստատվել Ալեքսանդր Թամանյանը, գիտնական քարտուղար՝ Աշխարհբեկ Քալանթարը, անդամներ՝ Մարտիրոս Սարյանը, Թորոս Թորամանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Պահպանության կոմիտեն այս կազմով պահպանվեց մինչև 1933 թ. հունիսի 2-ը, այնուհետև անվանափոխվել է որպես Հնությունների կոմիտե մինչև 1941 թ. հունվարի 25-ը, երբ ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ մտել է Ակադեմիայի հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) կազմի մեջ:*

*[2] Աշխ. Քալանթարի մասին մանրամասն տե՛ս* Гарибджанян. 2021, 281.

*ների հուշարձանապահպան գործունեությունը լուսաբանող արխիվային վավերագրերը:*

## Աշխ. Քալանթարի պայքարը պատմահնագիտական վայրերի պահպանության համար

*Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայաստանում նոր թափ են ստանում Հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքները. նկատելի էր թե՛ կատարվող աշխատանքների ծավալը և թե՛ տարածքային ընդգրկումը: Երկրի տարածքում սփռված նյութական մշակույթի բազմահազար մնացորդների պահպանության և դրանց համապարփակ ուսումնասիրության գործն ամբողջությամբ դրված էր Հնությունների պահպանության կոմիտեի վրա: Ուստի 1930-ական թվականներին կոմիտեի գիտական քարտուղար Աշխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը լուսաբանող արխիվային վավերագրերի բովանդակությունը, առանձին բացառություններով, գրեթե նույնն էր. նոր շինարարության թույլտվություն ստանալու հարցում խիստ հետևողականություն, կոմիտե հանող ահազանգերին արագ արձագանքում և այլն: Հայաստանի ազգային արխիվում պահվող և ասվածը հավաստող փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի գրությունը Ղռերի վարչություն: 25 հունիսի 1930 թ.: Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի ստացած տեղեկություններից պարզվում է, որ Ղամարլվի գավառակի (այժմ Արարատի մարզի – Կ. Բ.) Ագատավան (Ղրռ Բզովան) գյուղի մոտ, Հին Դվինի հնագիտական շրջանում, Ղռերի ոռոգման աշխատանքների միջոցին՝ մագիստրալ առվի փորումների ժամանակ, բացվել են կարևոր հնություններ: Այդ մասին հակառակ գոյություն ունեցող օրենքի, կոմիտեին ժամանակին տեղեկություն չի տրվել և հնությունները հանվել են առանց մեզ, որով և նրանք կորցրել են իրենց գիտական արժեքը: Կոմիտես խնդրում է ձեզ, կարգադրել աշխատանքների ղեկավարներին, այսուհետև հնություններ երևան գալու դեպքում, դեռևս նրանց չբացած, անմիջապես դադարեցնել աշխատանքները տվյալ կետում և մեզ տեղեկացնել հեռագրով, ներկայացուցիչ ուղարկելու պեղումներ կատարելու համար»[3]:*

*Խորհրդային իշխանության ամրապնդմանը զուգընթաց, պետական շատ մարմիններ հարց էին բարձրացնում զանազան ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով մշակութային մեծարժեք նմուշները հանրապետությունից դուրս տանելու համար: Բնականաբար, միակ թույլ տվող մարմինը, ըստ Հնությունների պահպանության կոմիտեի դեկրետի, մնում էր Հնությունների պահպանության կոմիտեն: Այսպես, 1930 թ. հունվարի 21-ին Լուսժողկոմին ուղղված Կոմիտեի զեկուցագրում կարդում ենք. «...լսելով Էջմիածնի թանգարանի վարիչի գրավոր դիմումը, որով նա խնդրում է Կոմիտեից խորհուրդ և աջակցություն թանգարանային որոշ նմուշներ Լենինգրադ՝ Էրմիտաժ 6 ամսով փոխադրելու, նույնպես և Պետթանգարանի վարիչի ինֆորմացիան՝ ... Անիի հնադարանից որոշ նմուշներ նույն Էրմիտաժը 4 ամսով ուղարկելու համար ...*

---

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1063, ց. 1, գ. 52, թ. 139 և շրջ.: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*

*Կոմիտես գտնում է, որ կուլտուրայի այդպիսի արժեքները Հանրապետության սահմաններից, թեկուզ և ժամանակավորապես, դուրս տանելը նախատեսված չի գոյություն ունեցող դեկրետով: ... այդ մասին Կոմիտեն տարբեր կարծիք ունի, ուստի նա խնդրում է Ձեզ, հնարավոր վերոհիշյալ արժեքների տեղափոխման հարցը վերանայել Կոմիտեիս մասնակցությամբ: Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[4]*:*

*Ահա այսպիսի կոշտ դիրքորոշում ուներ Հնությունների պահպանության կոմիտեն և առաջին հերթին նրա գիտական քարտուղարը մշակութային արժեք ներկայացնող յուրաքանչյուր բեկորի հարցում: Նույն կերպ էլ կոմիտեն արգելում էր առանց իր իմացության՝ հիմնարկ-ձեռնարկությունների կողմից մշակութային արժեք ներկայացնող իրերի ձեռքբերումը: Հայաստանի ազգային արխիվում պահվող այս փաստաթուղթն ասածի վկայությունն է. կոմիտեի զեկուցագիրն է Լուսժողկոմատին՝ 1930 թ. հունվարի 4-ին. «Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի, Հայաստանի պետական թանգարանի և Էջմիածնի պետական թանգարան-մատենադարանի վարչությունների միացյալ արտակարգ նիստը ս. թ. հունվարի 3-ին քննության առնելով լրագրերում զետեղած («Заря Востока», «Խորհրդային Հայաստան» № 291, 299 – 1929 թ. և № 3 – 1930 թ.) Անդրպետառի հայտարարությունը զանազան հնագիտական և գեղարվեստական արժեք ունեցող իրեր գնելու մասին, գտավ, որ՝ ... Հիշյալ հայտարարությունը հիմնովին հակասում է ՀՍԽՀ ժողկոմխորհի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետին (կետ 5), որով խստիվ արգելվում է նման արժեքների արտահանումը հանրապետության սահմաններից: ... արժեքների արտահանումը ներկայացնում է լուրջ վտանգ ոչ միայն Խորհրդային Հայաստանի և նրա ժողովուրդների անցյալը, այլև ընդհանուր կուլտուրայի ուսումնասիրության գործին և խորապես վնասում է մեր կուլտուրայի շինարարությանը: Ուստի ժողովը որոշեց դիմել Ձեզ, ... որպեսզի կանխվի վերհիշված և անխուսափելի վտանգը ... Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[5]*:*

*Աշխ. Քալանթարի հետևողական աշխատանքի ու պայքարի արդյունքում էր, որ շատ ժամանակ չանցած՝ 1930 թ. մարտի 2-ին, հրապարակվում է ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշումը՝ հնագիտական և գեղարվեստական նշանակություն ունեցող իրերի արտահանումն արգելելու մասին: Որոշման մեջ, մասնավորապես, ասվում էր. «Արգելել հնագիտական և գեղարվեստական ունիկալ նշանակություն ունեցող իրերի արտահանումը ՀՍԽՀ սահմաններից: ... Սահմանափակել այն հնագիտական և գեղարվեստական իրերի արտահանումը, որոնք ունիկալ չլինելով, այնուամենայնիվ, ունեն խոշոր նշանակություն ՀՍԽՀ պատմական կուլտուրայի ուսումնասիրության համար: ... Թույլ է տրվում արտահանել հնագիտական և գեղարվեստական իրերը, որոնք տարածված են բազմաթիվ օրինակներով, ինչպես նաև նրանց պատճենները: ... Այս որոշումը խախտողները ենթարկվում են քրեական պատասխանատվության: Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Ս. Տեր-Գաբրիելյան: Ժողովրդական կոմիսարների խորհրդի քարտուղար՝ Ա. Իսահակյան»*[6]*: Ուստի այն, որ*

[4] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 11: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*
[5] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 243, թ. 11: Բնագիր: Մեքենագիր:*
[6] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 243, թ. 7 և շրջ.: Պատճեն: Մեքենագիր:*

*Հնությունների պահպանության կոմիտեին հաջողվում էր հետևողական աշխատանքի շնորհիվ ստիպել անգամ հանրապետության բարձրագույն իշխանությանը՝ իր վերաբերմունքն արտահայտել օրենքին հավասար որոշման տեսքով, անշուշտ, գնահատանքի է արժան:*

*Նկատենք նաև՝ Հնությունների պահպանության կոմիտեն, իր գործակալների միջոցով տեղեկանալով հանրապետության սահմաններից դուրս գտնվող մշակութային արժեքների մասին, հարց էր բարձրացնում ԺողԿոմխորհի առջև՝ դրանք Հայաստան բերելու համար: Այսպես. «Կոմիտեի գրությունը ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահին: 9 ապրիլի 1930 թ.: Կոմիտեիս ունեցած տեղեկությունների համաձայն, Անդրկովկասը Թիֆլիսում՝ 1800 ռուբլով, մի մասնավոր անհատից ձեռք է բերել հայ արվեստի (մանրանկարչության) գլուխգործոցներից մեկը՝ XIII դարի Կիլիկյան շրջանի նշանավոր արվեստագետ Սարգիս Պիծակի նկարազարդած մագաղաթյա մի ձեռագիր: Համաձայն տեղեկությունների, վերոհիշյալ ձեռագիրը ներկայումս գտնվում է Մոսկվայում: Կոմիտես խնդրում է Ձեզ միջոցներ ձեռք առնել, որպեսզի հայ կուլտուրայի այդ եզակի արժեքը դուրս չգնա Միության սահմաններից և Խորհրդային Հայաստանի սեփականությունը դառնա»*[7]*: Մեզ մնում է հավելել, որ ներկայացված դրվագում Աշխ. Քալանթարն, անշուշտ, իր նշանավոր ուսուցիչ Նիկողայոս Մառի արժանի հետևորդն էր և մշտապես առաջնորդվել է Մառի կողմից մշակված այն սկզբունքներով, որի անմիջական ականատեսն ու մասնակիցն էր եղել: «Անիի տերն ու տնօրենը Մառն էր, – իր հուշերում գրում էր Անիի պեղումներում Աշխ. Քալանթարի մշտական ուղեկից և լուսանկարիչ Ա. Վրույրը, – նա խստիվ արգելել էր Անիից մի քար անգամ դուրս տանել: Նույնիսկ կայսերական օրենքին հակառակ, Անիում գտնված իրերը թողնում էր իր տեղում և գտնում էր, որ պեղումներից հանված իրը պետք է մնա Անիում՝ այն վայրում, որին նա պատկանում է: Մինչդեռ կայսերական օրենքը հրահանգում էր՝ երկրի սահմաններում ի հայտ եկած բոլոր արժեքավոր հնությունները կենտրոնացնել կայսրության մայրաքաղաքում»*[8]*:*

*Աշխ. Քալանթարը գիտության կազմակերպիչ էր բառի ամենալայն իմաստով. Ն. Մառին հասցեագրված 1932 թ. նամակում նա գրում է. «Ես խիստ անհանգստացած եմ իմ երեք աշակերտների գիտական պատրաստվածության համաձայն զբաղեցրած պաշտոնների համար – Լիդիա Կրիևս, Կարո Ղաֆադարյան և Սուրեն Երեմյան... նրանք իրենց լավագույնն են դրսևորել կոմիտեում ինձ հետ աշխատանքներում... Կարծում եմ, որ նրանք բոլորն էլ արժանի են Ակադեմիայի ասպիրանտուրայում սովորելու համար, եթե, իհարկե, դուք դա հնարավոր համարեք... Ինչ վերաբերում է Վաղարշապատի պեղումներին, ապա պետք է նշեմ, որ իմ ղեկավարությամբ արշավախումբը ամուր հիմքեր ունի ակնկալելու նյութական անհրաժեշտ աջակցություն այս ամռանը և աշնանը: Ձեզ նվիրված Աշխարհբեկ»*[9]*:*

*Հնությունների պահպանության կոմիտեն, իրավամբ, վեր էր ածվել հնագիտական արժեքների հավաքման յուրատեսակ մի վայրի. եկեղեցիներից ու վանքերից հավաքել և բեկոր առ բեկոր թանգարաններին էր հանձնել մեծա-*

---

[7] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 94: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*
[8] *Վ ր ո ւ յ ր. 1979, 29:*
[9] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 26–27:*

*քանակ նյութեր: Եվ կրկին այդ գործի նախաձեռնողն ու կազմակերպիչն Աշխ. Քալանթարն էր. արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Ցուցակ՝ Սևանա վանքից Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի 1930 թ. փետրվարի 28-ին փոխադրած իրերի՝ հանձնելու Էջմիածնի մատենադարան-ձեռագրատանը: 20 հուլիսի 1931 թ.: ...Սույն ցուցակում հիշատակված իրերը (մանրամասն նկարագրված են 10 անուն թանգարանային արժեքներ. – Կ. Բ.), համաձայն արված կարգադրության, հանձնարարվում է Կոմիտեիս տեսուչ-հրահանգիչին փոխադրելու և հանձնելու Էջմիածնի մատենադարան-ձեռագրատանը՝ Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[10]*:*

*Իհարկե, երկրում ամենուր ընթացող աննախադեպ շինարարության պայմաններում Հնությունների պահպանության կոմիտեն ի վիճակի չէր կանգնեցնել պատմական առումով նշանակալի առանձին կառույցների քանդումը, ինչպես ասենք՝ Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու պարագայում*[11]*: Այդպիսի կառույցների շարքում էր նաև Երևանի նշանավոր բերդը, որը ռուսական բանակները երեք արշավանքից հետո միայն՝ 1827 թ. հոկտեմբերին, կարողացան գրավել: Այդուհանդերձ, 1920-ական թվականների կեսերին կոմիտեն մի քանի անգամ նամակներ ուղարկեց պատկան մարմիններին, որպեսզի ետ կանգնեն բերդը քանդելու մտքից: Սակայն 1930-ական թվականներին այդպես էլ հնարավոր չեղավ փրկել այդ յուրօրինակ կառույցը, ինչ է թե՝ այն խանգարում էր նոր կառուցվող գինու գործարանին կամ, ինչպես զեկուցման մեջ է գրված, «մագիստրալ կանալի» անցկացմանը: Ներկայացվող վավերագիրը, թերևս, Երևանի բերդի մասին կոմիտեի վերջին զեկուցումներից մեկն է և որքանով նկատելի է զեկուցագրից, բերդը գնալով քայքայվում էր և վերածվում յուրօրինակ ավերակի: Մեջբերում ենք Հնությունների պահպանության կոմիտեի 1931 թ. նոյեմբերի 20-ի Լուսժողկոմ ուղարկված զեկուցագրից. «Սրանից 4 օր առաջ, Հնությունների պահպանության կոմիտեն պատահաբար տեղեկություն ստացավ, որ Երևանի հին բերդի շրջանում Ղռերի վարչությունը հողային խոշոր աշխատանքներ է կատարում: Մեր կատարած ստուգումից պարզվեց, որ մագիստրալի մի կանալ (ընդգծումը մերն է – Կ. Բ.) ծրագրված է անցկացնել Բերդի հնագիտական շրջանով՝ Զանգվի ձորի ձախ ափով, Բերդի պարիսպների աշտարակների վրայով, սկսած Արարատ (գինու– Կ. Բ.) գործարանի մոտից մինչև Բերդի հարավ-արևմտյան անկյունը՝ պարսպի թեքման կետը ... այդպիսով իսպառ ոչնչացնելու է Երևանի նախկին Բերդի՝ ձորի վրա գտնված հնության բոլոր մնացորդները՝ թե՛ պարիսպներն ու աշտարակները, և թե՛ Սարդարի ապարանքի այն միակ մնացորդը, որ 3 տարի առաջ Արարատ գործարանի շինարարական աշխատանքների միջոցին առանձնացված էր կոմիտեի կողմից և պահվում էր զգուշությամբ ապագա ուսումնասիրությունների և պեղումների համար: Ոչ միայն ընդհանրապես Բերդի սահմանում, այլ նույնիկ նրա միակ մնացորդներին այդպիսի լուրջ վտանգ է սպառնացող Ղռերի վարչության այդ ձեռնարկը, հակառակ Ժողկոմխորհի Հնությունների պահպանության վերաբերյալ դեկրետի 6 և 7 կետերի ... մեր*

[10] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 93, թ. 21: Բնագիր: Ձեռագիր:*

[11] *Այդ մասին մանրամասն տե՛ս* Բ ա յ ր ա մ յ ա ն. *2022, 118–137:*

*ստուգումը պարզեց, որ արդեն զգալի վնասներ են հասցրած հնության մնացորդներին, մանավանդ Բերդի հարավ-արևմտյան անկյունում կուտակված բուրգերին ու աշտարակներին, որոնց գլխից 5–6 մետր խորությամբ արդեն կտրված է: Ձեր կարգադրության համաձայն, այսօր, նոյեմբերի 20-ին, Ղռերի վարչության և Կոմիտեի հատուկ հանձնաժողովը, հանձինս ինժեներ Ս. Օհանեսյանի, Հակոբյանի և Աբրահամյանի, Կոմիտեի գիտաքարտուղար Աշխ. Քալանթարի, գիտաեկտորի վարիչ ընկ. Անդրեասյանի հետ միասին, այցելելով վայրը և տեղում քննության առնելով առանց հնությունները վնասելու, մագիստրալ ջրանցքն անցկացնելու հնարավորությունները, ցուցաբերեց հետևյալը ... Մագիստրալը կարելի է անցկացնել պարիսպների-աշտարակների տակով, նրանց ամբողջ երկարությամբ, Զանգվի ձորի լանջով... Արարատ գործարանի մոտ, առաջին և երկրորդ աշտարակների միջով, առուն անցկացնել վերին (Բերդատեղիի տափարակը) և դուրս բերել Բերդի հարավային պատով (առվի աջ կողմում թողնելով Բերդի բոլոր աշտարակները, որով նրանք մնում են անվնաս): ... Առուն անցկացնել առաջին և երկրորդ աշտարակների տակով (Արարատ գործարանի մոտ)...*

*Առաջադրելով այս հնարավորությունները, Կոմիտեն խնդրում է Ձեզ անել համապատասխան կարգադրություն, պահպանելու համար պատմական և գիտական խոշոր նշանակություն ունեցող այդ պարիսպները, որոնք նշանավոր են ոչ միայն իբրև պարսկական շրջանի շինարարության, այլև իրենց հիմքում ունեն հայկական և նախահայկական ամրությունների մնացորդներ, ինչպես պարզեցին Արարատ գործարանի շինարարական աշխատանքների ժամանակ բացված իրական տվյալները: Կոմիտեն լուրջ կերպով մտահոգված է, որ այս խնդիրը դրական լուծում ստանա, մանավանդ որ, Երևանի Բերդը մինչև այժմ բոլորովին ուսումնասիրված չէ: Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[12]*:*

## Աշխ. Քալանթարը հակաեկեղեցական պայքարի հորձանուտում

*Անուշտ, 1930-ական թվականները, ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տարածքում հոգևոր հաստատությունների հանդեպ անհանդուրժողականությունն աննախադեպ ծավալ էր ընդունել: Դրան հատկապես նպաստել էին խորհրդային կառավարության որդեգրած երկու մեծածավալ գործընթացները՝ կոլտնտեսային շարժումը և ինդուստրացումը, որոնք մեծ վնաս հասցրեցին պատմահնագիտական վայրերի պահպանության գործին: Եկեղեցիները քանդվում կամ վեր էին ածվում կոլտնտեսային պահեստի, խոտի ամբարի և այսպես շարունակ: Եվ, ընդհանրապես, կրոնամշակութային այդ շինությունները խորհրդային ագիտպրոպագանդայի համար դարձել էին յուրատեսակ թիրախ՝ աթեիստական գաղափարների տարածման համար: Ուստի Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի գործունեության համար այդ ժամանակաշրջանն ամենից դժվարին տարիներն էին: Սակայն նույնիսկ նման պայմաններում կոմիտեն անում էր հնարավորը՝ գաղափարական այս մեքենային հակազդել սեփական քարոզչությամբ, փորձում էր բացատրական աշխատանք տանել լայն հասարակայ-*

[12] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 93, թ. 116–117: Պատճեն: Մեքենագիր:*

*նության և, առաջին հերթին, դպրոցահասակ երեխաների շրջանում: Արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Կոմիտեի գրությունը Աշտարակի շրջլուսբաժվարին: 28 դեկտեմբերի 1930 թ.: Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն տեղեկություն ստացավ, որ Աշտարակի սբ. Մարինե եկեղեցու մոտ եղած խաչքարերը ջարդել են նույն հուշարձանի գավթում գտնվող դպրոցի աշակերտները: Նույնանման ապօրինի և միանգամայն անթույլատրելի երևույթ նկատվել է և անցյալներում՝ 1930 ուս. տարեվերջին, որի համար կոմիտեիս մոտ կա կազմած արձանագրություն և որի համաձայն հանցանքն ընկնում է դպվարի վրա: Կոմիտես խնդրում է հրահանգել շրջանիդ ուսուցիչներին՝ Հնությունների պահպանության գործը մասսայականացնել աշակերտության մեջ և նախազգուշացնել վերոհիշյալ դպրոցի վարիչին, որպեսզի նա ներշնչի աշակերտությանը խնամքով վերաբերվելու դեպի հնությունները, որովհետև նրանք համարվում են պետական սեփականություն և նրանց փչացնողները դատի են ենթարկվում իբրև խախտիչ ըստ 1923 թ. դեկտեմբերի 18-ի ԺԿԽ-ի դեկրետի: Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[13]*:* *Հետևողական նման աշխատանքի շնորհիվ՝ հնարավոր եղավ հնագիտական և պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շատ ու շատ կառույցներ փրկել վերահաս ավերումից: Բնականաբար, տեղերում աջակիցների պակաս էր զգացվում, ուստի կոմիտեն պահպանության գործի մեջ ներգրավեց եկեղեցու սպասավորներին: Այսպես. «Կոմիտեի գրությունը Մուղնու վանքի վանահայր Գրիգորիս քահանա Տեր-Գրիգորյանին: 7 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեի որոշմամբ Դուք ճանաչվում եք Մուղնու հուշարձանի պահպանող-հսկիչ: Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»*[14]*:*

*Հնությունների պահպանության կոմիտեի անունից իշխանություններին ուղղված գրությունները հաջորդում էին մեկը մյուսին, փորձում էին անհետևանք չթողնել և ոչ մի դիմում-ահազանգ: Այս տեսակետից ուշագրավ է հետևյալ փաստը. «... Ստեփանավանի շրջգործկոմի նախագահին: 10 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեն անցյալ թվի դեկտեմբերի 23-ի գրությամբ հայտնել է Ձեզ, որ Բերդ գյուղի տեղափոխության առիթով գյուղացիները քանդում և փչացնում են բացված ավազաններն ու դամբարանները ... Այժմ կուլտուրական բրիգադայի ղեկավարի հետազոտությունից պարզվում է, որ այդ ավերումները ոչ միայն չեն դադարեցվել, այլև շարունակվում է քանդվել Բերդի պատն ու հին եկեղեցին: Հիշեցնում ենք, որ նման անփույթ երևույթը խախտումն է Ժողկոմխորհի դեկրետի և համապատասխան շրջաբերականի: Խնդրում ենք անմիջապես միջոցներ ձեռք առնել այդ բացառիկ կարևոր նշանակություն ունեցող հուշարձանը պահպանելու և հանցավորներին պատասխանատվության ենթարկել և հետևանքների մասին մեզ տեղեկացնել ... որպեսզի Կոմիտեն համապատասխան զեկույց անի վերադաս մարմիններին և ձեռք առնի արտակարգ միջոցներ, ապահովելու հնագիտական արժեքները կորստից»*[15]*:*

---

[13] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 89, թ. 130 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:*

[14] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 52, թ. 41: Բնագիր: Ձեռագիր:*

[15] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, թ. 37 և շրջ: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*

*Ստորև բերվող վավերագիրը ևս ուշագրավ է. գաղափարական նոր մշակույթը գալիս էր քանդելու հին մշակութային արժեքը. «Կոմիտեի գրությունը Փաշաքենդի գյուղխորհրդի նախագահին: 20 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեին հայտնի է, որ Դուք Փաշաքենդի հուշարձանի վրա ռադիոյի սյուն եք դրել, որի պատճառով և մեկ քառակուսի խորաչափ նրա պատի քարերը թափվել են: Այժմ գրում եք, որ հուշարձանը խախտվում է և պահանջում եք 500 ռ. նորոգության համար: Կոմիտեն գտնում է, որ ինչպես պատի քարերի թափվելը, այնպես և հուշարձանի խախտվելը հետևանք է կտրի վրա սյուն տնկելուն, որ կատարել եք առանց Կոմիտեի գիտության և թույլտվության, որով Դուք անտես առնելով բարձրագույն օրգանների որոշումները, խախտել եք Ժողկոմխորհի դեկրետը և Կենտգործկոմի հատուկ շրջաբերականը (2 հունվարի 1931 թ., № 5396): Ի. Տ. նախագահի՝ Աշխ. Քալանթար»*[16]*:*

*Վերլուծելով Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի ու նրա գիտական քարտուղար Աշխ. Քալանթարի 1930-ական թվականներին ծավալած գործունեությունը՝ հստակ կարելի է ընդգծել, որ իրավիճակից դուրս գալու կոմիտեի որդեգրած քաղաքականությունը և Աշխ. Քալանթարի ձեռնարկած քայլերն այդ ուղղությամբ լիովին արդարացված ու հիմնավորված էին: Արվել է այն հնարավորը, ինչը թույլ էր տալիս տեղավորվել ժամանակի «գաղափարական հրամայականների» տրամաբանության շրջանակում: Սկզբում՝ Զվարթնոցի, հետո՝ սբ. Հռիփսիմեի, սբ. Գայանեի, Տաթևի վանքերին սպառնացող վտանգի չեզոքացման լավագույն տարբերակն այդ կառույցները Հնությունների պահպանության կոմիտեի անմիջական տնօրինության տակ ներառելն էր: Ուստի անգնահատելի ծառայություն մատուցեցին կոմիտեի աշխատակիցները և նրանց թվում՝ Աշխ. Քալանթարը, ովքեր կարողացան ներքաղաքական այդ մթնոլորտում համոզել հանրապետության բարձրագույն ղեկավարությանը՝ արձագանքել իրենց խնդրանքներին: Ներկայացվող վավերագիրը վերաբերում է Հաղպատ–Սանահին վանական համալիրին. «Քաղվածք ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Տնտխորհի նիստի արձանագրությունից՝ Հաղպատում և Սանահինում գտնվող եկեղեցիները Հնությունների պահպանության կոմիտեին հանձնելու մասին: 12 դեկտեմբերի 1931 թ.: Լսեցին. Հաղպատում և Սանահինում գտնվող եկեղեցիները, որպես պատմական հիշատակարաններ, Հնությունների պահպանության կոմիտեին հանձնելու մասին: Զեկուցող՝ Դ. Տեր-Սիմոնյան: Որոշեցին. … Առաջարկել Ալավերդու շրջգործկոմին 10 օրվա ընթացքում Հաղպատի և Սանահինի գյուղերում գտնվող և պատմական նշանակություն ունեցող եկեղեցիները հանձնել Հնությունների պահպանության կոմիտեին: Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Ա. Երզնկյան, քարտուղար՝ Լ. Ստեփանյան»*[17]*:*

*Իսկ թե ինչպիսի դժվարություններ է հաղթահարել կոմիտեն այդ ընթացքում, տեղեկանում ենք ՀՍԽՀ լուսժողկոմատին 1931 թ. դեկտեմբերի 19-ին*

---

[16] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, թ. 40 և շրջ: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*

[17] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, գ. 19, թ. 31: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*

*ներկայացված հաշվետու զեկուցագրից: «Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից մինչև 1922 թվի վերջը գործել է Հնությունների պետական պահպանության կոմիտեն, պահպանության օրգանի մի տարվա (1923 թ.) չգոյությունը պատճառ է դարձել մի շարք առաջնակարգ արժեքների ոչնչացման, որի հետևանքով, ԺԿԽ-ի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով կյանքի է կոչվել ներկա կոմիտեի վարչական և նրա հետ սերտորեն կապված, գիտական ֆունկցիաներով ու լիազորություններով իբրև հանրապետական օրգան, – գրված է զեկուցագրում: – Հնությունների պահպանության կոմիտեն իր 7–8 տարվա (1924 թ. ապրիլից) գործունեության ընթացքում ունեցել է և հաջողություններ, և բացեր... Հիշենք միայն, որ հատկապես պահպանության-վերահսկողության ասպարեզում կոմիտեն չունենալով իր տրամադրության տակ նյութական միջոցներ և շտատային աշխատակիցներ, տվել է գործին հասարակական բնույթ, աշխատակցության հրավիրելով բազմաթիվ գործիչներ շրջաններում (վարչական օրգանների աշխատակիցներ և սոսկ գյուղացիներ) և ստեղծելով տեղական ներկայացուցիչների ամբողջ ցանց, որը միաժամանակ կապ է հանդիսացել թե՛ կենտրոնի, և թե՛ տեղական օրգանների միջև, նրանց թիվը ներկայումս 106 հոգի է»[18]: Կազմակերպական բազում հնարքների կիրառման շնորհիվ կոմիտեին հաջողվեց իրականացնել հնավայրերի պահպանության այդ մեծ ծրագիրը. «Իր գիտատեխնիկական և գիտահետազոտական աշխատանքների բնագավառում կոմիտեն, կարելի է ասել, որ արել է ամեն ինչ, որ հնարավոր է եղել չնչին նյութական միջոցներով կամ նույնիսկ առանց դրան: Էքսպեդիցիաների միջոցով և անընդհատ շրջագայություններով հաշվառման-ռեգիստրացիայի և մանրամասն հնագիտական նկարագրության է ենթարկել ամբողջական շրջաններ, հավաքել վիմագիր արձանագրություններ և այլն: Տեխնիկական վերստուգման է ենթարկել ճարտարապետական կառուցվածքները՝ պարզելով նրանց դիմացկունությունը և անհրաժեշտ տեխնիկական օգնության տեսակն ու չափը: Կատարել է պեղումներ գոնե ճշգրիտ ֆիկսացիայի ենթարկելու և փրկելու համար գիտական փաստերը այն բոլոր հուշարձանների, որոնք պատահաբար բացվել են շինարարական աշխատանքների միջոցին և ենթակա են եղել ոչնչացման»[19], – ասվում էր 1931 թ. զեկուցագրում: Ավելին, կոմիտեի կողմից կազմակերպված տարատեսակ արշավախմբերի գործունեության արդյունքում հայտնաբերվել է մեծաքանակ հնագիտական նյութ, «պեղումների ժամանակ բացվել են բազում հուշարձաններ, ձեռք են բերվել հարուստ իրական տվյալներ: Սրանք բոլորն էլ խոշորագույն գիտական արժեք են ներկայացնում իրենց նորությամբ, բավական է ասել, որ Կոմիտեն արդեն հանձնել է թանգարաններին (Երևանում և Էջմիածնում) 35. 556 առանձին էքսպոնատ»,[20] – նշվում էր զեկուցագրում:*

*Անշուշտ, այն, ինչ ներկայացված է զեկուցագրում, խոսում է Հնությունների պահպանության կոմիտեի, ի մասնավորի՝ նրա գիտական քարտուղար Աշխ. Քալանթարի կատարած ծանրակշիռ աշխատանքի մասին: Փրկել և*

---

[18] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 1–2: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*
[19] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 2 :*
[20] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 2:*

*գալիք սերնդին ի պահ տալ 35 հազարից ավելի գիտական արժեք ներկայացնող ցուցանմուշ. փաստն ինքնին խոսուն է և մեկնաբանության կարիք չունի: Եվ դա այն դեպքում, երբ ինչպես նշվում է նույն զեկուցագրում՝ «... հուշարձանների տեխնիկական պահպանության խնդրում, որ ամենահիմնական անելիքն է, կանխելու համար իրական տվյալները քայքայումից, կոմիտեն իր տրամադրության տակ չի ունեցել համապատասխան հնարավորություններ... Այնուամենայնիվ, նրան հաջողել է կազմակերպել և իրականացնել երկու կարևոր հուշարձանի նորոգումը (Սանահինի կամուրջը և Երերույքի բազիլիկան): Կոմիտեն զրկված է եղել հնարավորությունից կատարելու իր հավաքած նյութերի մշակումը, ուսումնասիրությունը և մասսայականացումը»[21]:*

*Այս զեկուցագրում ներկայացվածը Հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքային ճակատի միայն մի բնագավառն էր. դրան հետևել է ձեռքբերված գիտական տվյալների հրապարակումը. «Հրատարակության միջոցով կոմիտեին հաջողել է դեռևս շատ քիչ բան մասսայականացնել այն ահագին նյութերից, որոնք նոր և շատ կարևոր խոսք ունեն ասելու գիտությունը՝ քաղաքակրթության պատմությանը և որոնք ամենամոտ ապագայում չհրատարակելը կլիներ կորուստ գիտության համար»[22]:*

*Հաշվետու զեկուցագրում, ի դեպ, ուշագրավ մի ափսոսանք կա: «Չնայած կոմիտեի ձեռք առած բոլոր միջոցներին, կոմիտեն ստիպված է արձանագրել, որ իրենց չի հաջողվել բնակչության միջից լիովին արմատախիլ անել հուշարձանների հանդեպ ցուցաբերած անբարեխիղճ վերաբերմունքը. հուշարձանների քանդումի և փչացման դեպքեր տեղի ունեցել են անգիտակից վերաբերմունքի հետևանքով: Առաջին տարիներում նկատվող քանդումները, կոմիտեի տարած կամպանիաների միջոցով այլևս դադարել են տեղի ունենալուց, ասվում էր զեկուցագրում: Զարամտությունից առաջացած քանդումների հանդեպ կոմիտեն դիմել է օրենքի պաշտպանությանը, իսկ շինարարական աշխատանքների հետ առնչություն ունեցող քանդումների դեպքեր, որոնք ավելի շատ են նկատվում վերջերս, չնորհիվ այդ աշխատանքների, տեխնիկական ղեկավարներից ոմանց անթույլատրելի անփույթ վերաբերմունքի, կոմիտեի ձեռք առած միջոցներն այդպիսիների հանդեպ անցել են ապարդյուն, և քանդվել-ոչնչացվել են հուշարձաններ, որոնք ընդհանուր գիտության համար իրենց ունիկալ նշանակությամբ ամբողջ էպոխաներ բնորոշող միակ դոկումենտներն են հանդիսանում: Իրերի ներկա վիճակում, երբ խոշոր և կարևորագույն հուշարձանների ամբողջական քանդման սանկցիա է արվում պետական օրգանների կողմից, Հնությունների պահպանության գործը դրվում է նույնպես խոշոր դժվարությունների մեջ, նրա հաջողությունը կասկածի տակ: Գործը կանոնավորելու համար հանդես է գալիս հրամայական անհրաժեշտություն՝ հետևողականորեն կիրառելու արտակարգ միջոցներ»[23]: Ի դեպ, Հնությունների պահպանության կոմիտեին հաջողվեց նաև Զվարթնոց*

---

[21] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թթ. 3–4:*
[22] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 4:*
[23] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 4:*

*հնավայրի նման, սբ. Հռիփսիմե վանքը կոմիտեի ենթակայությանը հանձնելու համար:*

## Եզրակացություն

*Արձանագրենք. Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն, քաջ գիտակցելով, որ Խորհրդային Միությունում սկսված և նոր թափ առած սոցիալիստական շինարարությունը իր «փլատակների» տակ էր առնելու պատմահնագիտական նշանակության հուշարձանները՝ չխայտելով անգամ Զվարթնոցի և նրա նման պատմահնագիտական կառույցները, կոմիտեի գիտական քարտուղար Աշխ. Քալանթարի ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ոչնչացումից փրկել ճարտարապետական մեծարժեք հնավայրերը: «Աշխարհբեկ Քալանթարը որպես Հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար, երկար տարիների ընթացքում, փաստորեն գլխավորում էր հանրապետությունում ողջ հնագիտական գործունեությունը: Դառնում է հայագիտության գլխավոր ճյուղերից մեկը հանդիսացող գիտական հաստատության, մերօրյա անվանումով՝ Հնագիտության ինստիտուտի առաջին փառաշուք տնօրենը, մշտապես համագործակցելով հայ մշակույթի պառնասի տիրակալներ Ալեքսանդր Թամանյանի և Մարտիրոս Սարյանի հետ»[24],– նշվում էր Աշխ. Քալանթարի գործունեությանը նվիրված հրատարակություններից մեկում:*

*1930-ական թվականներին Աշխ. Քալանթարի ծավալած գործունեությունը, անշուշտ, արժանի է գնահատանքի:*

**Կարեն Բայրամյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության տարածքային գործունեության համակարգման բաժնի պետ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանը XIX–XX դդ., Հայաստանի առաջին Հանրապետությունում և Խորհրդային Հայաստանում պատմահնագիտական հուշարձանների պահպանության պատմության հիմնահարցեր: Հեղինակ է 6 և համահեղինակ 1 հոդվածի:**
bayramyan_karen@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բայրամյան Կ. 2022, Աշխարհբեկ Քալանթար. Մի դիմակայության պատմություն. –«Էջմիածին», Ա, էջ 118–137:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, g. 1, գ. 243, ֆ. 1063, g. 1, գ. 19, 52, 88, 89, 93, 104, 110:

Վրույր Ա. 1979, Անիում, Երևան, «Սովետական գրող» հրատ, 45 էջ:

Քալանթար Աշխ. 2007, Երկերի ժողովածու, Երևան, ԳԱԱ գիտություն հրատ, 408 էջ:

Гарибджанян Ст. 2021, Биография ученых в документах. Ашхарбек Калантар. – «Вестник общественных наук» НАН РА, № 3, с. 280–286.

[24] *Քալանթար. 2007, 21:*

# ДЕЯТЕЛЬНОСТЬ АШХАРБЕКА КАЛАНТАРА ПО СОХРАНЕНИЮ ПАМЯТНИКОВ
(1930-е годы)

КАРЕН БАЙРАМЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Ашхарбек Калантар, Советская Армения, социалистическое строительство, Комитет по сохранению древностей, охрана памятников, противостояние, исследование, освещение.*

1930-е годы с политической, экономической и культурной точки зрения были переломными в истории Советской Армении: социалистическое строительство ознаменовал небывалый подъем, что вызвало новые проблемы в сохранении памятников старины и архитектурных сооружений, представляющих культурную ценность. Подчеркнутую нетерпимость советская власть в первую очередь проявляла к духовным институтам; многие церкви, представляющие культурную ценность, были снесены или превращены в колхозные склады, стоговища и т.д.

1930-е годы были самым тяжелым периодом также для деятельности Комитета по охране древностей Армении и его многолетнего ученого секретаря Ашхарбека Калантара. Комитет древностей в эти трудные годы, в рамках логики «идейных императивов» того времени, пытался сделать все возможное для сохранения древних памятников, представляющих историческую и археологическую ценность на территории Армении.

По личной инициативе Калантара были организованы экспедиции, в результате раскопок было найдено большое количество памятников и археологические материалы, получены представляющие научную ценность новые факты и сведения.

Благодаря повседневной работе и последовательности Калантара удалось спасти от разрушения ценные архитектурные памятники. С этой точки зрения проделанная Ашхарбеком Калантаром в 1930-е гг. работа, безусловно, заслуживает высокой оценки и признательности.

*Карен Байрамян – начальник отдела координации региональной деятельности Управления охраны памятников истории и культуры МОНКС РА, соискатель отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: Армения в XIX–XX вв., вопросы истории сохранения историко-археологических памятников в годы Первой Республики Армения, в Советской Армении. Автор 6 и соавтор 1 статьи.*
*bayramyan_karen@yahoo.com*

# ASHKHARBEK KALANTAR'S ACTIVITIES FOR PRESERVATION OF MONUMENTS (1930s)

KAREN BAYRAMYAN

S u m m a r y

*Keywords: Ashkharbek Kalantar, Soviet Armenia, socialist construction, committee for preservation of antiquities, protection of monuments, research, confrontation, coverage.*

From a political, economic and cultural point of view, the 1930s were a turning point in the history of the Soviet Armenia: socialist construction marked an unprecedented rise, which caused new problems in the preservation of ancient monuments and architectural constructions of cultural value. The soviet authorities showed emphasized intolerance, first, to the spiritual institutions; many churches of cultural value were demolished or turned into collective farm warehouses, hayfields, etc.

The 1930s were also the most difficult period for the activities of the Committee for Protection of Antiquities of Armenia and its long-term scientific secretary Ashkharbek Kalantar. During these difficult years, the Committee of Antiquities, within the logic of the "ideological imperatives" of that time, tried to do everything possible to preserve the ancient monuments of historical and archaeological value on the territory of Armenia.

There were organized expeditions on the personal initiative of Ashkharbek Kalantar; as a result of excavations a lot of monuments and archaeological materials were found, new facts and information of scientific value were obtained.

Thanks to the daily work and consistency of Kalantar, valuable architectural monuments were saved from destruction. From this point of view, the work done by Ashkharbek Kalantar in the 1930s, certainly, deserves high praise and appreciation.

*Karen Bayramyan – Head of the Division for Coordination of Regional Activities of the Department for Protection of Historical and Cultural Monuments of the MESCS of RA, Applicant at the Department of Epigraphy of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests:history of preservation of historical and archaeological monuments of Armenia in the XIX-XX centuries, the years of the first Republic of Armenia, cultural construction during the period of the Soviet Power in Armenia. Author of 6 articles and co-author of 1 article. bayramyan_karen@yahoo.com*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1